

46

ԱԿԱՆ ԽՈՀ ԼՈՒՍԴՈՂԿՈՄԱՏ

ՅԵՄ. ՅԱՐԱԾԱՎԱՐԿԻ

ՊՈԿՐՈՎԱԿՈՒ ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱՇ „ՃԿՈԼԱՅԻ“  
ՅԱԿԱՄԱՐՔՍԻՍԱԿԱՄՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԸ  
ՅԵՎ  
ՎՈՒՂԳԱՐԻԶԱՏՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ՈԴՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԱԽՆԵՐԻՆ

9  
3Q-48

ԼՈՒՍԴՐԱՏ

ՏԵՐԵՎԱՐԱ

1939

22 JUN 2005

3  
30-42

30 MAY 2011

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՈՒ ԼՈՒԺՈՂՎՈՐՈՒՄԱՏ

ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎԸԿԻ

ՊՈԿՐՈՎԾՈՒԽ ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱՆ “ՃԿՈԼԱՅԻ”  
ՔԱԿԱՄԱՐՔԻՄԱՏԱԿՄՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԸ  
ՅԵՎ  
ՎՈՒԼԳԱՐԻԶԱՏՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ՈԴՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԱՌԵՐԻՆ

ԼՈՒԺՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1939

09 JUL 2013

46



А037854

Խմբ. Արմա Հարենց  
Մըրբագրիչ Մ. Հախնազարյան  
Կոնսալտ օրբագրիչ Օ. Գալսյան  
Գլավվիտի լիազոր № 8003.  
Պատվեր № 153, տիրաժ 1500

Պետական առաջնային գրադարան, Երևան Տեղյան թ 72



2M377.59

I.

Այս խնդիրներից մեկը, վոր դնում եր իր առջեւ Համ կ(բ)կ կենտկոմը, ստեղծելով «Համ կ(բ)կ պատմության համառոտ դասընթացը», հանդիսանում է կուսակցության պատմության մեջ մարքսիզմինինիզմի թեորիայի մի շարք հարցերի մեկնաբանման առարիզում մարքսիստական գրականությունը հասարակացումից և վուլգարիզացիայից ազատելու անհրաժեշտությունը:

Ինչումն եր արտահայտվում այդ վուլգարիզացիան: Համ կ(բ)կ կենտկոմը «Կուսակցական պրոպագնդացի զրվածքի մասին, «Համ կ(բ)կ պատմության համառոտ դասընթացի» լույս ընծայման կապակցությամբ իր վորոշման մեջ այդ վուլգարիզացիայի որինակների շարքում մատնանշում և այն փաստը վոր.

«Պատմական գիտության մեջ մինչեվ վերջին ժամանակներս հակամարքսիստական խեղաթյուրումներն ու վուլգարիզատորությունը կապված եյին Պոկրովսկու այսպիս կոչված «շկոլայի» հետ, վորը պատմական փաստերը մեկնաբանում եր խեղաթյուրված, հակառակ պատմական մատերիալիզմին դրանք լուսաբանում եր այսորված հայեցակետից և վոչ թե այն

պայմանների տեսակետից, վորոնց մեջ ընթացել են պատմական իրադարձությունները, և, դրանով իսկ, աղավաղում եր իսկական պատմությունը»:

Ե'լ ավելի առաջ, պատմության դասագրքերի վերաբերյալ Համ Կ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ ժողկոմի 1936 թվի հունվարի 26-ի վորոշման մեջ նըշվում եյին այն բազմաթիվ խեղաթյուրումները, պատմական մնանկ բնորոշումներն ու դրույթները, վորոնք ունենին «իրենց հիմքում Պոկրովսկու հայտնի սխանները»: Այդ վորոշման մեջ Համ Կ(բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ ժողկոմի նոր մատնանշում եյին, վոր «մեր պատմաբանների, հատկապես ԽՍՀՄ պատմաբանների, վորոշ մասի մեջ արմատացել են պատմական դիտության վերաբերմամբ հակամարքսիստական, հակալենինյան, ըստ եյության լիկվիդատորական, հակագիտական հայացքներ»:

Պոկրովսկու մի խումբ աշակերտների կողմից ներկայացված՝ «ԽՍՀՄ պատմության» դասագրքի կոնսպեկտի առթիվ ընկերներ Ստալինի, Ժղանովի, Կիրովի դիտողությունները նույնպես նշում են մի ամբողջ շարք խոշորագույն խեղաթյուրումներ, ֆեոդալիզմը և մինչեղողական ժամանակաշրջանն իրար հետ խառնելը, պետության ինքնակալական կարգերի շփոթումը ֆեոդալական կարգերի հետ, յեղք Ռուսաստանը բաժանված եր բազմաթիվ ինքնուրույն կիսապետությունների: «ուեակցիա» և «հականեղափոխություն», հեղափոխություն «առհասարակ», բուրժուական հեղափոխություն և բուրժուա-դեմոկրատական հեղափոխություններն իրար հետ խառնելը:

Այս բոլոր և նման խեղաթյուրումները զգալի

շափով ներկայացնում են հայացքների մի սիստեմ, վորը հատուկ եր Պոկրովսկու ամբողջ «շկոլային» և այդ «շկոլայի» դեկավարին՝ պատմաբան-պլրոֆեսոր Մ. Ն. Պոկրովսկուն:

## II.

Վերն եր Պոկրովսկու փիլիսոփայությունը, վարժնք եյին նրա յելակետային տեսակետները: Ն. Պոկրովսկին յերբեք չի յերել գիտակալական մատերիալիզմի հետևողական կողմնակից: Նա մի ժամանակ տնտեսական մատերիալիզմի կողմնակից եր:

Լենինը պրոլետարական շարժմանը հարած այդպիսի գործիչների մասին գրում եր:

«Բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ընթացքում մեր կուսակցությանն են հարել մի շարք տարրեր, վորոնք գրավել ե վոչ թե նրա զուտ պրո-լետարական ծրագիրը, այլ գերազանցապես նրա վառ յեռանգուն պայքարը հանուն գեմոկրատիայի և վորոնք պրոլետարական կուսակցության հեղափոխական-դեմոկրատական լոգունդներն ընդունել են սոցիալիստական պրոլետարիատի ամբողջ պայքարի հետ սրանց կապից գուրս» (Հատ. 14, եջ 97):

Հայտնի յե, վոր Լենինը բացասարար եր վերաբերվում վոչ միայն «տնտեսական մատերիալիզմ» աերմինին, այլ գտնում եր, վոր տնտեսական մատերիալիզմը, վորը պարզեցված ձևով պատմության զարդացման ամբողջ բովանդակությունը հանգեցնում է եկոնոմիկային, վուլգարիզացիային, պայմանական պլոցեսի ներքինացում, պատմության մեջ տուաջավոր

իդեաների գերի ժխտում, զբսից բանվորական շարժումն մեջ մտցվող դիտակցականության տարբերի ժխտում: Դեռևս «Ի՞նչ են ժողովրդի բարեկամները» գրքում Լենինը բանավիճելով նարոդնիկ Միխայլովսկու դեմ դեմ, զբում եր. «Սակայն Դուք վնասեղ եք կարգացել Մարքսի կամ Ենպելսի գրվածքներում, թե նրանք խոսել են անպայման տնտեսական մատերիալիզմի մասին: Իրենց աշխարհայացքը բնութագրելով՝ նրանք անվանում եյին այն սոսկ մատերիալիզմ»: (Հատ. 1-ին, եջ 92):

Պոկրովսկին իր յերեկոյի մեջ կամքնած չեր դիտակտիկական մատերիալիզմի տեսակենտի վրա, այլ անց եր կացնում սլրովտարիատի բուրժուական և մանր-բուրժուական «ուղեկիցների» գիծ: 1904 թվին Պոկրովսկին ապացուցում եր, վոր «իրականությունը մեր պատկերացումն և միայն: Աշխարհը, մեր «ապրումների» միակցությունն ե» (Մ. Ն. Պոկրովսկի: «Պատմական գիտությունը և դասակարգերի պայքարը», պարագ 2, եջ 18):

Այսակողից պարզ ե, վոր Պոկրովսկին կողմնակից իր իդեալիստական բորբանովական թեորիային և զլորվում եր դեպի մախիզմի թեորիան:

Մախիստների և հմագիրիոկրիտիկների նման իդեալիստական հայացքների դեմ և ուղղված Լենինը «Մատերալիզմ և եմպիրիոկրիտիզմ» գիրքը:

Պոկրովսկին չեր ընդունում, վոր գոյություն ունեն բնության որյեկտիվ որենքներ՝ անկախ մեր զիտակցությունից: Իսկ լենինը, Մարքսից և Ենգելսից հետո գրում եր. «Բնության որյեկտիվ որինաչափության և մարդու գլուխում այդ որինաչափության մոտա-

վորապես ճիշտ արտացոլման ճանաչումը՝ մատերիալիզմն ե» (Հատ. 13, եջ 127): Պոկրովսկին ժխտում եր որյեկտիվ որինաչափությունը: Նա հայտարարում եր, թե «որենքը—դա նույնիսկ իրականության պլանն ել չե, նրա սիմեման ել չե, դա—նրա չափանիշն ե, մասշտաբն ե» (Մ. Ն. Պոկրովսկի: «Պատմական գիտությունը և դասակարգերի պայքարը» ժողովածու, պրակ. 2, եջ 23):

Պոկրովսկին գնաց ավելի հեռուն—նա ուղղակի կոչ եր անում պատմության բնագավառում կիրառել Մախի իդեալիստական ուսմունքը՝ նպատականարմարության սկզբունքի տիրապետության մասին: Պոկրովսկին դրանով իսկ հարում ե մեկ կողմից այնպիսի սոցիոգների բուրժուական շկոլային, ինչպես Սպենսերը և ութշները, իսկ մյուս կողմից—վուգար եկնումիսաներին:

Պոկրովսկու այս սխալները ռեակցիայի շրջանում նրան դասեցին ոտղովիստաների բանակը, իսկ ավելի ուշ, իմպերիալիստական պատերազմի շրջանում նրան մոտեցրին Տրոցկուն:

Արդեն պրոլետարական դիկտատուրայի ժամանակաշրջանում Պոկրովսկին իր յելույթներից մեկի մեջ (1931 թ. գեկտեմբերի 1-ին արտասանած հոբելյանական ճառում) հանձնարարում եր չճանաչել որյեկտիվ պատմական գիտությունը: Նա հայտարարեց, թե որյեկտիվ-պատմական գիտություն չկա, և զրանով իսկ բոլշևիզմի թշնամիներին առիթ տվեց պնդելու, թե բոլշևիկյան գիտությունը ևս որյեկտիվ գիտություն չե, վորը լիովին հակասում ե մարքսիզմ-լենինիզմին:

Մ. Ն. Պոկրովսկին և նրա «Հկուան» սովորեցնում եին, թե «պատմությունը քաղաքականություն եւ շուռ տված դեպի անցյալը»: Այդ տանում և դեպի պատմական հեռանկարի խեղաթյուրումը, պատմական իրադարձությունները վերցվում են վոչ այն կապակցությամբ, վորում դրանք տեղի յեն ունենում, նրանց վրա սուբյեկտիվորեն փոխադրվում են այսորվա բնութագրություններն ու գնահատականները, կատարվում ե պատմության մոդերնիպացիա: Այսպես որինակ, Պոկրովսկին 60-ական թվականների «Յերիտասարդ Ռուսաստանին» պրոլետամայիսի մեջ տեմնում եր պրոլետարական հեղափոխության իրադարձությունների կանխագուշակումը: Պուդաչի ջոկատները նա համեմատում ե խորհրդային ժամանակաշրջանի քաղաքացիական պատերազմի կարմիր-գվարդիական ջոկատների հետ:

Ժամանակակից շրջանի և հեռավոր անցյալի միջև պարադոքսալ սիսկի հետ կապված անալոգիաների հետեւց վաղելով, Պոկրովսկին, որինակ, Զերնեցևսկուն հայտարարեց... մենշևկ — «Վելիկոուսի» ծրագրին կողմանակից («Ռուսաստանի ԽIX և XX դարերի հեղափոխական շարժման պատմության ուրվագծեր» — Գետհրատ եջ՝ 47—48), իսկ Տկաչևին, վորի նարոգնիկան և բլանկիստական հայցքները Մարքսն ու Ենգելսն անողոքաբար ծաղրում ելին, Պոկրովսկին անվանում էր «առաջին ռուսական մարքսիստ» (նույն տեղ, եջ՝ 50):

Պոկրովսկին ժխտում է կենինի հսկայական դերը,

վորպես Ռուսաստանի պատմաբան, այն ժամանակ, յերբ կենինի մի շարք աշխատությունները — «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» և նրա ավելի ուշ ժամանակների աշխատությունները, վորոնք վերաբերում են և 1905 թ. հեղափոխությանը, և ռեակցիայի շրջանին, և իմպերիալիստական պատերազմի շրջանին, հանդիսանում են, ինչպես և ընկեր Ստալինի աշխատությունները, արժեքավորագույն մի ավանդ պատմական գիտության մեջ:

Պոկրովսկին անտեսում է իր բոլցելկյան կուսակցության հսկայական դերը վորպես հեղափոխության մեջ ղեկավար ուժ: Նա անտեսում եր ժողովրդական մասսաների ու նրանց հերոսների դերը ԽՍՀՄ-ի պատմության մեջ:

Լինելով Լուսժողկոմատի կոլեգիայի անդամ և ժողկոմի տեղակալ Պոկրովսկին մինչև 1922—1923 թ. թ. միանգամայն ժխտում եր դպրոցում պատմության ուսումնասիրման անհրաժեշտությունը: Պաշտպանելով դպրոցի «մահացման», «կորպլեքսային դասավանդման» «ձախլիկ» թերիաները, Պոկրովսկին լիկվիդատորական ձեռնարկումներ եր կիրառում պատմության դասավանդման մեջ: Թողարկվելով այն մեծագործ Փրազով, թե «մարքսիզմը և ինինիզմը կողմնորոշվում են վոչ թե անցյալի, այլ ապագայի վրա», Պոկրովսկին ժխտում եր հենց պատմությունն ամենահին ժամանակներից ուսումնասիրելու անհրաժեշտությունը (Պոկրովսկի «II աստիճանի շրջ կոնցենտրում հասարակագիտության մասին»: «II աստիճանի դպրոցի հարցերը» ժողովածու, Մուկվա 1926 թ, եջ՝ 178):

Հայտնի յե, վոր Պոկրովսկին դեմ եր պատմության

հետևողական ժամանակագրական շարադրմանը: Նա նույնիսկ հավատացնում եր, թե «Ժամանակագրական դատաները նույնպես ընդհանուր վոչ մի բան չունեն վորեւ իրականության հետ» (Պոկրովսկի—«Պատմականությունը և ժամանակակցությունը Հ-րդ աստիճանի դպրոցների ծրագրերում», եջ՝ 5): Հայտնիր յե, վոր հենց լենինը պնդեց, վորպեսզի դպրոցներում ուսումնասիրեն պատմական իրադարձությունների դատաները և Պոկրովսկին ստիպված եր լենինի առաջարկությամբ սինխրոնիստական աղյուսակներ տալ «Ռուսաց պատմությունն ամենասեղմ ուրվագծերով» իր գըրքում:

Կարիք կմ արդյոք ապացուցելու, թե վորքան մեծ և Պոկրովսկու թեորիաների և պրակտիկայի կողմից խորհրդային դպրոցին հասցված վնասը:

#### IV.

Պոկրովսկու տեսակետն անցյալի վերաբերմամբ, ընդհանուր վոչինչ չունի մարքսիզմ-լենինիզմի հետ:

Դիմենք ուսուաց պատմության առանձին շրջաններին՝ Մ. Ն. Պոկրովսկու շարադրմամբ:

Պոկրովսկին ժխտում է ուսուական պետության գոյության կիևյան ժամանակաշրջանը: Այն ժամանակ, յերբ Կարլ Մարքսը պատմության՝ կիևյան ժամանակաշրջանը հատկապես ընդգծում է վորպես Յեփրոպայի արևելքում կայսրության անման ժամանակաշրջան և անալոգիա յե կատարում Արևելքում կիւեյան Ռուսիայի ու Արևմուտքում Կարլ Մեծի կայսրության միջն, Պոկրովսկին պնդում է թե կիյևյան

դարաշրջանում միասնական «ոռւսական պետության» մասին՝ խոսել կարելի յէ միայն բացահայտ թյուրիմացության հետևանքով» (Մ. Ն. Պոկրովսկի, «Ռուսաց պատմությունը հնագույն ժամանակներից սկսած», 1-ին, եջ՝ 170, 1920 թ.):

Կիյևյան Ռուսիան Պոկրովսկին նկարագրում է վորպես անդաստկարդ հասարակություն: Հստ վորում նա անտեսում է այնպիսի պատմական փաստաթղթեր, ինչպես «Ռուսսկայա Պրավդա»-ն: Այսպիս որինակ «Ռուսաց պատմությունն ամենասեղմ ուրվագծերով» գրքի 1929 թիվ հրատարակության մեջ նույնիսկ, մենք կարդում ենք՝ «Պատիժներ սկզբում չկային, վորովհետեւ X—XI դարերի քաղաքացին Ռուսիան գեռաւ չգիտեր հասարակական դասակարգեր»: Յեկ դրա հետեւյ, հենց նոր ասվածին լիովին հակառակ մենք կարդում ենք, «Պատիժները տիրապեսոյ դասակարգի համար միջոց են ծառայում պահպանիլու իր իշխանությունն ու արտօնությունները...» («Ռուսաց պատմությունն ամենասեղմ ուրվագծերով» Պետրաս, 1929 թ., եջ 29): Հասարակական դասակարգեր չկային, իսկ տիրապետող դասակարգ կար: Իսկ ում վրա յեր իշխում այդ դասակարգը:

Պոկրովսկին Ռուսիայի մկրտությանը մոտենում է վոչ վորպես պատմաբան, այլ վորպես վատ պրոպագանիստ—անաստված: Նա վորեն վերլուծում չի տալիս այն փոփոխություններին, վորոնց հետ կապված եր Ռուսիայի մկրտությունը՝ Յեփրոպայի հետ կիյևյան Ռուսիայի կապերի ընդլայնում, գիր ու գրականության թափանցումը վանքերի միջոցով, դպրոցների առաջանալը: Պոկրովսկին ամեն ինչ հանգեցնում է

«արտաքին փոփոխությամբ», «Խոսքը վերաբերում եր հենց ծեսերի փոփոխմանը, իսկ կրօնական հավատամիքները թե նախքան մկրառությունը և թե նրանից հետո, և այս ժամանակ, և ավելի ուշ՝ մինչև մեր որերը մնում եյին վորպես անխիզմ...» (Մ. Ն. Պոկրովսկի, «Խուսաց պատմությունն ամենասեղմ ուրվագծերով» 1929 թ. էջ 36):

Կարծեք թե խոսքը վերաբերում եր միայն կուլտին և վոչ թե կուլտուրային:

#### V.

Բոնադատելով պատմական փաստերը, դրանք դնելով իր սոցիոլոգիական սխեմայի պրոկրուտյան մահճում, Պոկրովսկին ամբողջ ոռւսաց պատմության առանցքը համարում եր առևտրական կապիտալը: Իբր Կիյեվյան Խուսիայի պատերազմներն ել առևտրական կապիտալի պատերազմներ են, ոպերիչներայի պայքարը բոյարների գեմ նույնպես առևտրական կապիտալի պայքար ե: Ցեմելյան Պուգաչովի ապատամբությունն ել առևտրական կապիտալի պայքար ե («կաղակային») ընդդեմ նույնպես առևտրական կապիտալի (Մոսկվայի), գեկարգիստների ապատամբությունն ել առևտրական կապիտալի պայքար ե, 1861 թվի ոեֆորմն ել կիրառվում եր առևտրական կապիտալի աղբեցության տակ, ոռւս-ճապոնական պատերազմն ել առևտրական կապիտալի պատերազմ ե, 1914—1918 թ. թ. վերջին իմպերիալիստական պատերազմն ել պայքար ե Ռուսաստանում կապիտալիզմի յերկու տեսակների միջև—առևտրականի և արդյունաբերականի:

Ավելի հեռուն գնալ հնարավոր ել չե պատմու-

թյան հակալենինյան խեղաթյուրման մեջ, հանուն արհեստականորեն հորինված սոցիոլոգիական սխեմայի:

Պոկրովսկին, իրեն համարելով մարքսիստ, իր աշխատություններում պաշտպանում եր իդեալիստական թեորիաներ: Այսպես որինակ, ֆեոդալիզմի ծագման հարցում նա պաշտպանում եր պրոֆեսոր Պավլով-Սիրվանսկու իդեալիստական թեորիան: Հակառակ Մարքսի և Ենգելսի ուսմունքին, հակառակ Լենինի ուսմունքին՝ հաստարակական-տնտեսական ֆորմացիան ների փոփոխման մասին, Պոկրովսկին այն հիմն ական ուժը, վորը ստեղծում եր Մոսկվայի ինքնակալական ճորտափրական պետությունը, տեսնում եր վոչ թե ֆեոդալական հոգատերերի դասակարգի մեջ, այլ առևտրական կապիտալիզմի մեջ: Նա կրկնում եր, թե մոնոմախյան գլխարկով, ոռւսական հողի վրա շրջում եր առևտրական կապիտալը:

1931 թվին միայն նա, թեկուզ բնավ ել վոչ լիովին, խոստովանեց, վոր այդ հարցում ինքը սխալ վում եր:

Մ. Ն. Պոկրովսկին լիչպես եր բացատրում գյուղացիական ապստամբությունները Ռուսաստանում: Այստեղ յեկա նրա համար «զեկավար ուժը» առևտրական կապիտալը եր: Պոկրովսկին և նրա «շկոլան» մեղավոր են այն բանուժ, վոր արդեն պրոլետարական գիկտատուրայի ժամանակաշրջանում լույս տեսած պատմական աշխատությունների մեջ այդ գյուղացիական շարժումները բնութագրվում են գյուղացիական շարժման ժամանակի ճորտերի կողմից զրջանառության մեջ թողնված տերմիններով — «պուգաչչինա», «ռազմինչինա»: Համ վորում պետք ե ասել, վոր

իր բազմահատոր «Ռուսաց պատմությունը հնագույն ժամանակներից սկսած» աշխատության մեջ՝ Պոկրովյակին 17-րդ դարի իրադարձությունները շարադրելիս վոչինչ չի ասում Ստեղան Ռազինի ապստամբության մասին։ «Ռուսաց պատմությունն ամենասեղմ ուրվագծերով» գրքում Պոկրովյակին հավատացնում է, վոր Ստեղան Ռազինի ապստամբությունն «անմիջականութեն կապված եր առևտրական կապիտալիզմի զարդարման հետ» («Ռուսաց պատմությունն ամենասեղմ ուրվագծերով»: 1929 թ., էջ 80):

Հիշեցնենք Լենինի ճառը, արտասանված Կարմիր հրապարակում գտնվող նախկին Կառավինատեղից, Ստեղան Ռազինի արձանը բաց անելիս: «Այս արձանը, — ասում եր Լենինը, — ներկայացնում ե խոռվահույլ գյուղացիության ներկայացուցիչներից մեկին: Այստեղ նա դրեց իր գլուխը՝ աղատության համար մղվող պայշարում»:

Հիշեցնենք ընկեր Ստալինի գրույցն Եմիլ Լյուդվիգինի հետ։

«Մենք, բոլշևիկներս, միշտ հետաքրքրվել ենք այնպիսի պատմական անձնավորություններով, ինչպես Բոլոտնիկովը, Ռազինը, Պուպաչյովը և ուրիշները: Այդ մարդկանց յելույթների մեջ մենք տեսնում ենքն անշված զասակարգերի տարերային գայրույթի, ֆեոդալական ձնշման դեմ գյուղացիության տարերային ապստամբության արտացոլումը: » Մեզ համար միշտ հետաքրքրություն ե ներկայացրել գյուղացիության նման ապստամբությունների առաջին փորձերի պատմության ուսումնասիրությունը: Բայց, ի հարկե, վորեւե անալոգիա բոլշևիկների հետ այստեղ կատարել

## Հի կարելի՞»:

Պոկրովյակին ընդգծում եր Պուգաչովի ապստամբյան կազակային բնույթը, սքողելով նրա գյուղացիական բնույթը: Լենինի և Ստալինի վերաբերմունքը դեպի այդ ժողովրդական, գյուղացիական ապստամբությունները, ինչպես մենք տեսանք, ընդհանուր վոչ մի բան չունի՝ դրանց նկատմամբ Պոկրովյակու վերաբերմունքի հետ:

## VI.

Պոկրովյակին միանգամայն սխալ կերպով ե մեկնարանում ոռուսաց պատմության այնպիսի կարերագույն մոմենտները, ինչպես թաթարական լուծը, լինական ինտերվենցիան, խառը ժամանակները, 1812 թվի հայրենի պատերազմը: 1812 թվի պատերազմի հանցավորներին և նրա պատճառները վորոշելու հարցում Պոկրովյակին տառացիորեն ստրուկի պես հետեւում ե այնպիսի մի անվտանելի աղբյուրի, ինչպես Պետերուրգում նապոլեոնյան զենապան Կոլինկուրի մեմուարները: Հենց այդ նապոլեոնյան լրտեսն եր գրում, թե 1812 թվի պատերազմի միակ հանցավորը հանդիսացավ ոռուս աղնվականությունը: Իհարկեն, ոռուս աղնը վականները վախենում ենին Ֆրանսիական բուրժուական հեղափոխության հեղափոխական զաղափարները Ռուսաստան թափանցելուց: Բայց հայտնի յե, վոր Նապոլեոնի արշավանքը Ռուսաստանի վրա հափշտակողական, կողոպտիչ պատերազմ եր, և հենց այն պատճառով, վոր այդ արշավանքը հափշտակողական, կողոպտիչ եր, նա առաջացրեց հայրենի պատերազմ,

և Նապոլեոնի դեմ յելալ ամբողջ Ռուսաստանը: Հետեցնենք, թե այդ պատերազմի մասին ինչ եր գրում Լենինը 1919 թվի փետրվարին:

«Նապոլեոնի իմպերիալիստական պատերազմները շարունակվեցին շատ տարիներ, ընդունեցին մի ամբողջ դարաշրջան, յուրյա տվեցին ազգային-ազատազրական շարժումների հետ միահյուսվող իմպերիալիստական հարաբերությունների արտասովոր բարդ ցանցը» (Լենին, Յերկեր, հատ. XXII, էջ՝ 287): Պարզ չեն արդյոք, վոր Լենինը 1812 թվի հայրենի պատերազմը համարում եր ազգային-ազատազրական շարժում:

Պոկրովսկին անտեսում եր այն անվիճելի փասար, վոր Նապոլեոնի բանակը ջախջախվեց ինտերվենցիայի դեմ հերոսական ժողովրդական պատերազմի հետևանքով, և այդ ջախջախումը նկարագրում ե վորապես արդյունք հենց նապոլեոնյան բանակում յեղած անկարգությունների: Լավ անկարգություններ են, յերբ ամբողջ ժողովուրդը Ռուսաստանում վոտքի յեր յելել հափշտակիչների դեմ:

Վոչ պատմական, հակամարքսիստական բացատրություն ե տվել Պոկրովսկին նաև դեկարքիսների ապստամբուրյանը: Հայտնի յե, վոր Լենինը դեկարքիստների ապստամբությունը համարում եր հեղափոխական: Լենինը բազմիցս խոր հարգանք ե արտահայտել դեպի դեկարքիստները, թեև նրանց համարում եր «ազնվական հեղափոխականներ»:

«Մեծարելով Գերցենին,—գրում եր Լենինը, մենք պարզ տեսնում ենք յերեք սերունդ, յերեք դասակարգ, վորոնք գործում եյին ոռուսական հեղափո-

յության մեջ: Ակզբում—աղնվականներն ու կալվածատերերը գեկարբիստները և Գերցենը: Նեղ և այդ նեղափոխականների շրջանը: Զավագանց հեռու յեն նրանք ժողովրդից: Բայց նրանց գործը չի կորել: Դեկարքիստներն արթնացրին Գերցենին...» (Հատ. XV, էջ՝ 468):

Լենինն ընդգծում եր, վոր գլխավորը գեկարքիստների շարժման մեջ—նրանց պայքարն ե ընդգեմ ճորտատիրության և ցարական ինքնակալության: Նա գնահատում եր դեկարքիստների հանրապետական արագիցիանները: Լենինը հպարտանում եր դեկարքիստներով:

Իսկ Պոկրովսկին գեկարքիստների շարժման մեջ տեսնում եր միայն աղնվական շարժում: «Ծուրժուական սահմանադրություններից վերցրած վոչ մի տեսակ Փրազներ,—գրում եր նա, —չեն կարող քողարկել այն փաստը, վոր դեկարքիստների շարժումն ըստ եյության ազնվական շարժում եր» (Կ. Լելին և Մ. Պոկրովսկի «Դեկարքիստները»: — «Ծուրժուականի պատմությունը XIX դարում», Գրանատ յեղբ. հրատարակություն, I, էջ՝ 108—109):

## VII.

Նարօդթիկուրյունը Պոկրովսկու պատկերացմամբ նույնպես ստացել եր վոչ ճիշտ, հակալինինյան լուսաբանում: Լենինը նարօդնիկությունը ընորոշում եր վորպես մանր-բուրժուական, գյուղացիական դեմոկրատիայի գաղափարախոսություն: Նարօդնիկական, ուստապիստական սոցիալիզմը—այդ՝ գյուղացիական սոցիա-



Աղմ ե: 70-ական թվականների հեղափոխական նաբողնիկության վերասերումն իսկ՝ լիբերալ նարողնիկության, կենցնը բացատրում եր գյուղացիության շերտավորմամբ, գյուղի պառակտումով:

Իսկ Պոկրովսկին ժխտում եր լինինյան այդ տեսակեաը, վորը չեր կարող նրան հայտնի չլինել «Նաբողնիկությունը, — զբում եր Պոկրովսկին, — մանր-բուրժուական ինտելիգենցիայի հասարակական աշխարհայացքն ե, — «գրագետ տասնապետի» աշխարհայացքը, նրա, վորը չի մոռացել գյուղացիական խրճիթը, վորտեղ նա աճել ե, վորը գիտակցում ե իր հանցանքը և իր պարտքը ժողովրդի հանդեպ, բայց այնուամենայնիվ հրամանատարություն ե անում այդ ժողովրդի նկատմամբ և նրա վրա նայում ե վերեկց՝ ներքեվ» («Մոռաց պատմությունն ամենասեղմ ուրվագծերով» 1929 թ., եջ՝ 187):

Հստ վորում, պետք ե նշել հենց նոր քաղվածք բերված գրքի առաջին հրատարակություններում Պոկրովսկու կողմից թույլ տրված կոսիր սխալը: Պոկրովսկին ինտելիգենցիային համարում եր հատուկ, պրոլետարիատի և բուրժուազիայի արանքում միջանկյալ դասակարգ և զրանով իսկ ջուր եր լցնում մախայել շշինյայի ջրադաշին:

Միանգամայն հակամարքսիստական հայացքներ ենք գտնում Պոկրովսկու մոտ 1905 թ. տուաջին բուժուաթեմական նեղափոխաւրյան հարցի վերաբերյալ: Ինքը՝ Պոկրովսկին բացատրում եր, վոր այդ նրա համար մի ժամանակաշրջան եր, յեր նրա մեջ վերջնականապես կործանվում եյին գեմոկրատական

իլյուզիաները: Բայց իր սխաների բացատրությունը ևս Պոկրովսկին սխան նոր սխալով: «Դասակարգային պայքարը, 1905 թ. շնորհիվ թեորիայից դարձավ կենսական փաստ—առանց նրան արդեն չի կարելի հասկանալ պատմական պրոցեսը» («Պոդ գնամենեմ մարքսիզմա», № 10—11, 1924 թ., եջ՝ 210):

Նախքան 1905 թ. հեղափոխության անցնելը, մի փոքր կանգ առնենք Մ. Ն. Պոկրովսկու աշխատությունների մեջ ոռու-ձապոնական պատերազմի բնութագրման վրա: Այստեղ ևս հրապարակի վրա նորից հանդես ե գալիս ամենուրական առեւրական կապիտալը: «Ավանտյուրայի ղեկավարն եր առեւրական կապիտալալը» (Ժողովածու, «1905 թ.», հատ. I, եջ՝ 606):

Հակառակ կենցնին և Ստալինին, վորոնք սահմանեցին, վոր ցարիզմը—այդ՝ «ռազմա-ֆեոդալական իմպերիալիզմ ե», հակառակ կենցնի այն ցուցումին, վոր Խուսաստանում 1904—1916 թ. թ. իշխանության դրույ կանգնած եյին «մի բուռ ճորտատեր-կալվածատերեր, վորոնց գլխավորում եր Նիկոլայ II» (հատ. XX, եջ՝ 570), Պոկրովսկին այդ պատերազմը պատկերում եր վորպես առեւրական կապիտալի պատերազմ: Նա միանգամայն սխալ կերպով բանն այնպես եր նկարագրում, վոր իբր արքունիքում պայքարում եյին յերկու կապիտալիզմ՝ մեկն ավելի խաղաղ—արդյունաբերական-վիտտեյականը, իսկ մյուսն ավելի կողոպտիչ—առեւրական կապիտալիզմը:

«Մոռաց պատմանի արտաքին քաղաքականությունը XX դարում» դասախոսությունների մեջ Պոկրովսկին բերում եր անհանդուրժելիորեն կոպիտ սոցիոլոգիական մի սխեմա: Նրա ասելով դուրս եր գալիս, վոր Ռու-

սաստանի արտաքին քաղաքականությունը XX դարում երբ թե իմպերիալիստական չեր, վորովհետեւ Բուռաստանը 1906 թվից հետո, այսինքն՝ ոռուս-ճապոնական պատերազմից հետո միայն, թևակոխեց իմպերիալիզմի ըլջանը:

Այս հանգամանքը, վոր Պոկրովսկին ցույց չտըշվեց ճապոնական իմպերիալիզմի կողոպտիչ նպատակները, այլ նաև բանն այնպես պատկերացրեց, թե ճապոնիան միայն պաշտպանվում եր ցարական կառավարության գիշատիչ ձգտումներից, անտարակույս, ոգտակար և ճապոնական ինտերվենտներին։ Մենք հետագայում կտեսնենք, վոր նույնյպիսի կոպիտ սխալ Պոկրովսկին թույլ ե տվել նաև 1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմի պատճառների գնահատության մեջ։

Պոկրովսկին խոշորագույն սխալներ եր կատարում 1905 և 1917 թ. թ. հեղափոխությունների պատճառների վերլուծման մեջ հենց նրա համար, վորովհետև նա կանգնած չեր լինիսյան տեսակետի վրա։ Հետագայում նա խոստովանեց, վոր իմպերիալիզմի գնահատության հարցում գոնե 1924 թիվը նա «նստած եր յերկու աթոռների միջև, չիփերգինգի կոնցեպցիայի և լենինի կոնցեպցիայի...» (Մ. Ն. Պոկրովսկի, «Բննադրատության ոգուտի մասին, արսոլյուտիզմի, իմպերիալիզմի, մուժիկական կապիտալիզմի և այլնի մասին»—«Պող զնամենեմ մարքսիզմ», 1924 թ. № 12, էջ 254):

Ուստի, Պոկրովսկու մոտ, իմպերիալիզմի նրա բնութագրման մեջ, չի կարելի գտնել այնպիսի կարե-

վորագույն մի հատկանիշ, ինչպես իմպերիալիստաների ձգտումը աշխարհի նոր վերաբաժանման։

Պոկրովսկին միանգամայն սխալ կերպով եր բնութագրում ցարիզմի դասակարգային եյությունը, Բողոքանովի հետևից Պոկրովսկին կրկնում եր, թե ցարական ինքնակալությունը «բնավ ել մնացորդը չեր ֆեոդալական ալեհեր անցյալի, այլ առևտրական կապիտալի, այսինքն՝ հենց կապիտալիստական զարգացման նախորդ ստագիայի ծնունդն եր» (Մ. Ն. Պոկրովսկի, «Մուսաստանի XIX և XX դարերի հեղափոխական շարժման պատմության ուրվագծեր», հրատ. 2-րդ, թ. էջ՝ 126):

Լենինը, ինչպես հայտնի յե, ցարիզմը բնութագրում եր նախ և առաջ վորպես ճորտատեր-կալվածատերերի շահերի ներկայացուցիչ։ Լենինը գտնում եր, վոր ցարական միապիտությունը միջնակետն և հանդիսանում ամեն տեսակ «սեհարցուրակային կալվածատերերի (իսկ դրանցից առաջինն ե՝ Ռումանովը)» (Համ. XV, էջ՝ 247)։ Պոկրովսկու համար ցարական ինքնակալությունը «քաղաքականապես կազմակերպված առևտրական կապիտալիզմն ե» (Պոկրովսկի, «Մուսաստանի XIX և XX դարերի հեղափոխական շարժման պատմության ուրվագծեր», հրատ. 2-րդ, 1927 թ., էջ՝ 10)։ Կալվածատերը Պոկրովսկու համար — «առևտրական կապիտալի գործականն ե» (նույն տեղը, էջ՝ 172)։

### VIII.

Պոկրովսկին ըստ եյության կանգնած եր ուժորմիստական տեսակետի վրա։ Հակառակ լենինին, վորը

անդում եր, վար բուրժուա-ղեմոկրատական հեղափոխությունը մուսաստանում հարկավոր եր նրա համար, վրապեսզի վերջ դրվեր ճորտատիրության մնացորդներին և ուղի հարթվեր մուսաստանում զասակարգացն պայքարի համար, Պոկրովսկին պնդում եր, թե դրա համար հարկավոր չեր հեղափոխություն, այլ վոր դրա համար բավական եր կառավարական ռեֆորմը:

Պոկրովսկին ուղղակի պնդում եր, թե համապարտ յերաշխավորությունը վերացվեց առևտրական կապիտալի կողմից և նույն այդ առևտրական կապիտալը 1861 թվին իր թե, չեղալ հայտարարեց նաև ճորտատիրական իրավունքը, թե 1906 թվին այդ նույն առևտրական կապիտալն իր լիկիդացիայի յենթարկեց նաև գյուղացիական համայնքը. իսկ քանի վոր այդ լիկիդացիան կատարվում եր հենց ցարական կառավարության կողմից, ապա դրա համար, Պոկրովսկու կարծիքով, «հարկավոր չեր հեղափոխություն, այլ բավական եին ռեֆորմները» («Մուսաստանի XIX և XX դարերի հեղափոխական շարժման պատմության ուրվագծեր», հրատ. 2-րդ, 1927 թ., եջ՝ 126):

Անինը բազմից մատնանշում եր, վոր 1905 թ. բուրժուա-ղեմոկրատական հեղափոխությունը—զգալի չափով գյուղացիական հեղափոխություն ե. իսկ Պոկրովսկին գտնում եր, վոր 1905 թ. հեղափոխության մեջ տեղի յեր ուսենում կապիտալիզմի յերկու ձեւերի կատաղի պայքար—առևտրական կապիտալի պայքարն արդյունաբերական կապիտալի հետ:

Պոկրովսկին միանգամայն սխալ կերպով եր նկարագրում նաև 1905 թվի առաջին բուրժուա-ղեմո-

կրատական հեղափոխության շարժիչ ուժերը. Անինը գտնում եր, վոր պլոտինտարիտի դաշնակիցը հեղափոխության մեջ, կալվածատերերի դեմ, ցարիզմի դեմ նրա պայքարում հանդիսանում ե ամբողջ գյուղացիությունը. սոցիալիզմի համար մղվող պայքարում պրոլետարիատի գաջնակիցն և հանդիսանում գյուղացիական չքափորությունը: Իսկ Պոկրովսկին մի ժամանակ կուլակին համարում եր «գյուղի միակ քաղաքականապես զգայուն, առավել գենոկրատական շերտը»: Այսուղից ել Պոկրովսկու մոտ առաջ ե գալիս գյուղացիության մենցեկցյան-տրոցիկիստական թերագնահատումը բուրժուա-ղեմոկրատական հեղափոխության մեջ:

Վատանգավոր ու ֆլամակար ե նաև 1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմի առաջացման պատճառների՝ Պոկրովսկու կողմից տրված բնութագիրը: 1915 թվին Պոկրովսկին Փարիզի «Խնտերնացիոնալիստների ակումբում» ուժիքրատ կարգաց «Պատերազմի հանցավորները» թեմայի վերաբերյալ: Ուժիքրատը վորոշ փոփոխություններով տպագրվեց 1919 թվին: Այդ սեփերատի մեջ Պոկրովսկին ասում եր, թե Դերմանիան «վոչ միայն ինքը չեր ձգտում հափշտակումների, այլ և այդ բանում խանգարում եր իր շատ ավելի կավարար դաշնակիցին—Ավստրո-Հունգարիային» (Մ. Ն. Պոկրովսկի, «Իմպերիալիստական պատերազմը», հոդված՝ «Պատերազմի հանցավորները»: Հրատ. 1928 թ., եջ՝ 39):

Պոկրովսկին պնդում եր, վոր Դերմանիան հենց միայն նրա համար ել սկսեց պատերազմը, վորովենեւ կարծում եր, թե իր «մեզ վրա ուղում են հարձակվել»: Նա ժխտում եր Փրանսիական ու գերմանական

Կառավարությունների համարակական պլանները, ժիստում եր Գերմանիայի և Անգլիայի հակասական շահերի առկայությունը: Պատերազմի գլխավոր հանցավորներ Պոկրովսկին համարում եր ոռուսական կալվածատերերին: Կալվածատերերը, իբր թե, զայթակղեց եյին ֆրանսիական վաշխառուներին ու անգլիական պահպանողականներին, և այդտեղից ել ծագեց պատերազմը:

Դուրս ե գալիս, վոր Վիճելմի կայսրությունը — անմեղ զոհ ե: Այդպիսի վերսիան ձեռնատու յեր Շերտեմանին ու Նոսկեին, իսկ այժմ այն ձեռնատու յե Փաշիստներին:

Հետագա հոդվածներում նույնպես, Պոկրովսկին ցույց չտվեց գերմանական իմպերիալիզմի, վորպես պատերազմի գլխավոր հանցավորներից մեկի, նողկալի գերը, արդար եր դուրս բերում նրան — գրանով իսկ սելիզիայի յեր յենթարկում Լենինի և Ստալինի հայցքները 1914—1918 թ. թ. պատերազմի վերաբերյալ:

## IX.

1917 թվի փետրվարամարտյան բուրժուազեմոկրատական հեղափոխությունը Պոկրովսկին համարում եր «ըանվորական» հեղափոխություն: Այդ հրեշտավոր ե, բայց դա փաստ ե: «1917 թվի մարտին, — գրում եր Պոկրովսկին, — հաղթեց հեղափոխությունը, անտարտկոյա, իսկական բանվորական հեղափոխությունը, («Ռուսաստանի XIX և XX դարերի հեղափոխական շարժման պատմության ուրվագծեր», հրատ. 2-րդ, 1927 թ., եջ 191),

1927 թ., եջ 111): Պոկրովսկին արոցկիստաբար «թըռչում եր» բուրժուազեմոկրատական հեղափոխության ետապի վրայով: «Փետրվարյան հեղափոխությունը, — դրում եր Պոկրովսկին, — յեղել ե... վոչ միայն պրոլետարական հեղափոխություն այն մասսայի սոցիալական կազմով, վորը տապալեց ինքնակալությունը և փաստորեն կանգնեց իշխանության գլուխ, այլ անխուսափելի կերպով նաև սոցիալիստական հեղափոխություն եր միանգամայն որյեկտիվորեն» («Ռուսաստանի XIX և XX դարերի հեղափոխական շարժման պատմության ուրվագծեր», հրատ. 2-րդ, 1927 թ., եջ 191):

Հստ վորում, Պոկրովսկին վրապարտիչ ձևով նկարագրեց Լենինի և բոլցիկների կուսակցության գիրքը: Տրոցկու հետեւից Պոկրովսկին պնդում եր, թե բոլցիկները 1917 թվին վերադինվեցին, թե 1917 թվին Լենինը, իբր, բուրժուազեմոկրատական հեղափոխությունց այն կողմ չեր գնում: Մինչդեռ, ինչպես հայտնի յե, Լենինը փետրվար-մարտյան հեղափոխությունը համարում եր սոցիալիստական հեղափոխության հենց նախերգանքը, մի աստիճան՝ նրան անցնելու համար. Լենինն այն համարում եր հեղափոխության միայն առաջին ետապը, վորի վրա նա կանդառնել չի կարող: Հայտնի յե, վորը դեռևս 1894 թվին Լենինը հարց զրեց բուրժուազեմոկրատական հեղափոխությունն անհապաղ կոմունիստականի վերաճելու մասին և հետազայում այդ ուսմունքը զարգացրեց վորպես ուսմունք սոցիալիստական հեղափոխության մասին: Հայտնի յե, վոր Լենինն ապրիլյան թեղիներում և ավելի վաղ՝ «Նամակներ հեռվից»-ում դրել եր

հեղափոխության հաջորդ ետապին, սոցիալիստական հեղափոխության անցնելու ինդիքը Խակ Պոկրովսկին 1924 թվին գրում եր, թե իր Լենինը 1917 թվի առ բիլին «գալիս եր Ռուսաստան այն համոզմունքով, վոր սոցիալիստական հեղափոխությունը Ռուսաստանում անհնարին ե» (Մ. Ն. Պոկրովսկի, «Լենինը ռուսական հեղափոխության մեջ», ժուռնալ «Վեստնիկ Կոմունիստիչնեկոյ ակադեմիի», գիրքը № 7, 1924 թ., էջ 18):

Հակառակ Լենինի և Ստալինի այն ուսմունքին, վոր հեղափոխության զիմանը և հիմնական հարցը հանդիսանում է իշխանությունը նվաճելու հարցը, Պոկրովսկին պնդում եր, թե այդ՝ արտադրությունը բանվորների ձեռք անցնելու աստիճանական պրոցեսի հարց ե:

Պոկրովսկու այդ պնդումները զտարյուն լյուքսենբուրգականություն են: Հայտնի յե, վոր Ռոզա Լյուքսենբուրգը սոցիալիստական հեղափոխությունը դուտ մենշևկորեն պատկերացրեց վհչ վորպես զինված ապստամբության—իշխանությունը պրոլետարիատի կողմից գրավելու ակտ, այլ վորպես կապիտալիստական արտագրությունն աստիճանաբար բանվորների ձեռքն անցնելու պրոցես:

Պոկրովսկին կանգնած լինելով «ձախ» կոմունիզմի գիրքերի վրա, չեր հավատում մեկ յիշկում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հնարավորությանը: «Известия Московского совета рабочих депутатов»-ում (№ 199, 1917 թ.) Պոկրովսկին գրում եր, «Քանի վոր սկսվել ե պրոլետարական հեղափոխությունը, — այն պետք ե ծավալի համայնքրոպական մասշտաբով, կամ թե նա կտապալի նաև

Ռուսաստանում: Խմակերիալիստական «աերություններով» շրջապատված ռուսական պրոլետարական գյուղացիական հեղափոխությունը չի կարող գոյություն պահպանել: Այդպիսի հրաշք «Յեվրոպան» թույլ չի տա»:

Թեև «Յեվրոպան», այսինքն կապիտալիստական աշխարհը, իրոք չեր ուղղում այդպիսի հրաշք թույլ տալ, սակայն այն կտարավից և խորհրդային սոցիալիստական պետությունը, հակառակ Պոկրովսկու արոցկիստական պնդմանը, զոյություն ունի 21 տարի: Նա աճում է և ամրապնդվում, և յեթե «Յեվրոպային» իրոք դուր չի գալիս խորհրդային պետության գոյությունը, ապա նրան վոչնչացնել նա չի կարող՝ «սույնը նրանից» չի կախված»: Խորհրդային պետությունն այնքան և ամրապնդվել, վոր նա ընդունակ է կործանիչ հակածարված տալու կապիտալիստական ինտերվենցիային:

\* \* \*

Ինչու՞ բացատրել վոր Պոկրովսկին իր պատմական աշխատությունների մեջ թույլ ե տվել այսքան կոռպիտ, հակամարքսիստական խեղաթյուրումները ու սխալները: Դա բացատրվում ե նրանով, վոր Պոկրովսկին — ինչպես նա ինքն ել բազմից խստովանել ե — հետեւ վողական մարքսիստ-լինինյան չեր:

Մ. Ն. Պոկրովսկին ականավոր ուսւ բուրժուական պատմաբանների՝ Կլյուշեվսկու, Պլատոնովի, Վինոգրադովի՝ աշակերտն ե: Անցյալ դարի 90-ական թվականներին Պոկրովսկին հարում եր «լեգալ մարքսիստներին» և վաղ ժամանակին վերաբերող իր աշխա-

առւթյունների մեջ հանդես եր գալիս վորակես տնտեսական մասերի խաղը կողմանակից: Այն ժամանակ այդ յելություններն ունեյին վորոշ պրոգրեսիվ նշանակություն, քանի վոր Պոկրովսկին պայքարում եր բուրժուական և մանր-բուրժուական պատմաբանների դեմ, վորոնք վորպես պատմության հիմնական շարժիչ ուժ առաջ եյին քաշում աշխարհագրական միջավայրը, կամ ինչ վոր «վորի», վորն առաջ և մղում պատմությունը, կամ «ազգային իդեալը» (որինակ սլավյանոփիլները):

Սակայն Պոկրովսկին չկարողացավ մինչ վերջ հաղթահարել կլյուչեսկուու, վիճողրազովի և բուրժուական այլ պատմաբանների սխալների ծանր բեռք:

Պոկրովսկին ինքն ել չեր ժխտում, վոր նրա գործունեյության մինչև 1905 թիվն ընդդրկող ժամանակաշրջանը «կարելի յե բնութագրել վորպես գեմոկրատական իլյուզիաների և տնտեսական մատերիալիզմի ժամանակաշրջան» («Պոդ զնամենեմ մարքսիզմա», Ժուռնալ № 10—11, 1924 թ. հոկտեմբեր-նոյեմբեր, էջ՝ 210): Պոկրովսկին քյահաճորեն, միանգամայն սխալ կերպով և «բացատրում», թե ինքն ինչու յեր այն տարիներին գնում այդ ուղիով. «Դասակարգային պայքար չկար մեղ մոտ — իսկ մասսաների հետ մենք, ակադեմիկներս, քիչ եյինք շփվում: Ընդվորում գասակարգային պայքարն այն որերին յերբեմն ընդունում եր չափազանց հրեշտավոր ձեվեր (զուրատով շնչան): Դրանք մեր գեմոկրատական ծրագրի մեջ տեղափորել շատ եր դժվար: Դասակարգային պայքարը նույն եր թեորիա, և, վորպես զուտ թեորիա, քիչ եր

արտացոլվում պատմական հորինվածքների մեջ...» (նույն տեղը):

Այսպիսով, Մ. Ն. Պոկրովսկին դասակարգային պայքարի ամբողջ վեթխարի, բաղմապեսի բովանդակությունը՝ մինչև 1905 թիվը, հանգեցնում եր զուրատովշնչային: Նա իր շուրջը չեր տեսնում դասակարգային պայքար, չեր նկատում վհչ 900-ական թվականների սկզբի գյուղացիական լայն շարժումը, վհչ բանվորական շարժման անցումը տնտեսական գործադրություններից՝ քաղաքական գործադրությունների, քաղաքական ցույցերի: Պատմական փաստերի այդ անտեսումը չափազանց բնորոշ և Պոկրովսկու «Հկոլայի» համար,— այն ձգտում եր պատմության ամրող բովանդակությունը խցկել նախապես հորինված պատմական փաստերին չհամապատասխանող, մերկ սոցիոլոգիական սխեմաների մեջ:

Մ. Ն. Պոկրովսկին հանդիսանում ե մի շարք պատմական աշխատությունների հեղինակ: Հիշատակենք հետեւյաները՝ «Մուսաց պատմությունն ամենահին ժամանակներից սկսած» (4 հատոր), հոդվածներ «Մուսաստանի պատմությունը XIX դարում»-ի մեջ (Գրանատի հրատարակություն): Նրա՝ «Մուսաց պատմությունն ամենասեղմ ուրվագծերով» գիրքը մինչև վերջին ժամանակներս ուսւաց պատմության միակ գասագիրքն եր խորհրդային շրջանում:

Մ. Ն. Պոկրովսկին զեկավարում եր Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտը. նրա զեկավարությամբ եյին մի ամբողջ շարք տարիների ընթացքում դաստիարակվում պատմաբանների կադրերը: Մ. Ն. Պոկրովսկին զեկավարում եր Պետական գիտական խորհուրդը

(ԴՐԻՍ), վորը մշակում և հաստատում եր բոլոր ծրագրերը, դասագրքերը, տալիս եր մեթոդական ցուցումներ և այլն:

Պոկրովսկու կողքին և նրա հովանավորության տակ պատմության ճակատում գործում եր ժողովրդի թշնամիների մի ամբողջ խումբ:

Մենք ցույց տվեցինք Պոկրովսկու և նրա շկոլայի կողմից թույլ տրված ամենակոպիտ սիստեմերի միայն մի մասը:

«Համ կ(բ)կ պատմության համառոտ գասընթացն» ողնում և մերկացնելու Պոկրովսկու պատմական «շկոլայի» այդ հակալենինյան դրույթները:

Անհրաժեշտ և ամենահիմնավոր կերպով ցըհէ Մ. Ն. Պոկրովսկու պատմաբանական «շկոլայի» ամբողջ ժառանգությունը, բացահայտել Պոկրովսկու յերշկերի մեջ պարունակվող ամենակոպիտ սիստեմը և դրանց տակ հարկ յեղած մարքս-լինինյան գնահատական:

Առանց Պոկրովսկու «շկոլայի» այդպիսի լիակատար ջախջախման չի կարելի ծավալել մարքս-լինինյան ոբյեկտիվ պատմական գիտությունը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0403198

153

ԳԻՒԾ 50 ԿՈՎԵԿ

037854